Արձանագրություն 4

«ԳՀԱՊՁԲ-ԴՁ-ՁԻԱՀ-18/2» ծածկագրով գնանշման հարցման ձևով դեղորայքի ձեռքբերման գնման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստի

Անցկացման վայրը՝ ք.Երևան, Աճառյան 2, «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ, 2-րդ հարկ, 207 սենյակ
Անցկացման օրը՝ 26 հունիսի 2018թ.
Անցկացման ժամը՝ 10:00
Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Արշակ Ասմարյան
Հանձնաժողովի անդամներ՝	Արշակ Պետրոսյան
	Լիանա Շախրամանյան
	Տաթևիկ Շիրինյան
	Հովհաննես Հակոբյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Գևորգ Խանոյան

I. Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի գնահատման մասին

(նախագահ՝ Արշակ Ասմարյան)

Ընդունել ի գիտություն, որ

1.1 ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե առաջին տեղն զբաղեցրած մասնակիցների՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ հարցում ուղարկելուց հետո սահմանված ժամկետում (26.06.2018թ.) ստացել ենք եզրակացություն, համաձայն որի մասնակիցները՝ «Դեզսերվիս» ՍՊԸ-ն, «Ալֆա-Ֆարմ իմպորտ» ՓԲԸ-ն և «Տոնուս-Լես» ՍՊԸ-ն չունեն ժամկետանց հարկային պարտավորություններ և մասնակիցների կողմից ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող:

1.2 Հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված առաջին տեղը զբաղեցրած մասնակցի ներկայացված փաստաթղթերի գնահատման թերթիկները, համակարգողն ամփոփեց ընթացակարգի մասնակցի հայտի գնահատման արդյունքները, ինչն արտացոլված է ստորև ներկայացված աղյուսակում.

N h/h	**Գնահատման չափանիշը**	**Գնահատման արդյունքը**		
		«Դեզսերվիս» ՍՊԸ	«Ալֆա-Ֆարմ իմպորտ» ՓԲԸ	«Տոնուս-Լես» ՍՊԸ
1.	Որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթեր	համապատասխանում է	համապատասխանում է	համապատասխանում է
Ընդհանուր գնահատականը		**համապատասխանում է**	**համապատասխանում է**	**համապատասխանում է**

Հանձնաժողովը որոշեց.

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի պահանջների համաձայն, «Դեզսերվիս» ՍՊԸ-ի, «Ալֆա-Ֆարմ իմպորտ» ՓԲԸ-ի և «Տոնուս-Լես» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը գնահատել բավարար և առաջին տեղ զբաղեցրած մասնակցին հայտարարել ընտրված մասնակից՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով.

- N 1, N 10, N 11, N 13 N 15, N 16, N 17, N 18 և N 20 չափաբաժինների համար «Դեզսերվիս» ՍՊԸ-ին:
- N 4, N 22, N 26, N 29 և N 36 չափաբաժինների համար «Ալֆա-Ֆարմ իմպորտ» ՓԲԸ-ին:
- N 27 և N 28 չափաբաժինների համար «Տոնուս-Լես» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

II. Հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին

(նախագահ՝ Արշակ Ասմարյան)

2.1 Հանձնաժողովը որոշեց.

ա) ընտրված մասնակիցների հետ պայմանագրեր կնքել Օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետի ավարտից հետո: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը էլեկտրոնային ձևով գնումների գործընթացի բոլոր մասնակիցներին ուղարկելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը (27.06.18թ. մինչև 01.07.18թ.):

բ) հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները, ազգանունները և ստորագրությունները

Հանձնաժողովի նախագահ՝	Ա.Ասմարյան	(ստորագրություն)
Հանձնաժողովի անդամներ՝	Ա.Պետրոսյան	(ստորագրություն)
	Լ.Շախրամանյան	(ստորագրություն)
	Տ.Շիրինյան	(ստորագրություն)
	Հ.Հակոբյան	(ստորագրություն)
Հանձնաժողովի քարտուղար՝	Գ.Խանոյան	(ստորագրություն)